

<https://doi.org/10.59982/18294359-25.1-ah-10>

Արմինե Արկադյայի Հոփսեփյան

Հայցորդ

ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն

aarminehovsepyan@gmail.com

Ամփոփագիր

Հոդվածում ընդգծված է այն հանգամանքը, որ վարչական մարմինն վերապահված ցանկացած հայեցողություն պետք է լինի կառուցվածքային, այսինքն՝ կանոնակարգում և կազմակերպում՝ կարգուկանոնի ստեղծմամբ, ինչն իր հերթին նպաստում է վարչական մարմնի կողմից բարձրորակ վարչական ակտերի կայացմանը՝ խուսափելով մարդու իրավունքների և ազատությունների խախտումներից: Վարչական մարմիններն՝ իրենց հայեցողական լիազորություններն իրականացնելիս պետք է պահպանեն օրենսդրությունը և հետևեն իրավակիրառ պրակտիկայի զարգացումներին՝ նկատի ունենալով նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները: Նման պայմաններում վարչական մարմինները հեշտությամբ կարող են հասնել իրենց վերապահված հայեցողության նպատակին, այսինքն՝ իրականացնել պատշաճ վարչարարություն՝ ապահովելով պետության կողմից իրենց վստահված հայեցողական լիազորությունների իրականացման բարդ խնդիրը՝ միաժամանակ ապահովելով վարչական մարմնի գործունեության նկատմամբ վստահության ձեռքբերումը կամ արդեն իսկ ձեռքբերված վստահությունը:

Հոդվածում անդրադարձ է կատարվել նաև հայեցողական լիազորությունների կիրառման հարցում իրավակիրառ պրակտիկայի և իրավական կարգավորման նորմատիվ համակարգի սերտորեն փոխկապվածությանը՝ հիմքում դնելով վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների կիրառման արդյունավետ մեխանիզմները, որոնք բխում են պրակտիկայում ձեռքբերված գիտելիքների ուժից և գործի հանգամանքների իրավական գնահատումից, հակասությունների հաղթահարումից, հայեցողական լիազորությունների մեկնաբանման և հստակեցման վիճելի հայեցակետերից ծագած խնդիրներից՝ վեր հանելով վարչական մարմնի կողմից կիրառվելիք հնարավոր լուծումները: Ըստ վերլուծության՝ իրավակիրառ պրակտիկայի և իրավակարգավորումների փոխկապվածության ամրապնդման մեխանիզմները կնպաստեն վարչարարության կատարելագործմանը:

Հիմնաբառեր: Իրավակիրառ պրակտիկա, հայեցողական լիազորություն, վարչական իրավունք, իրավակարգավորում, միջազգային փորձ, արդյունավետ մեխանիզմ:

Ներածություն

Հայեցողական լիազորությունների իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի միջև գոյություն ունի անխզելի փոխկապվածություն, որը հետապնդում է միայն մեկ նպատակ՝ ջանքեր գործադրել այն ծառայեցնելու անձանց իրավունքների և ազատությունների ապահովմանը: Հայեցողական լիազորությունների իրավակարգավորումները չպետք է ձևական բնույթ կրեն, քանի որ կարող է խախտվել վարչական մարմնի կողմից իրականացվելիք վարչարարության գործընթացը: Այդ փոխկապվածության պահպանումը հնարավոր է, երբ գործող իրավակարգավորումները համահունչ են իրավակիրառ պրակտիկային, իսկ վարչական մարմինը պատրաստակամ՝ դրանց ճիշտ մեկնաբանման և կիրառման հարցում:

Իրավակիրառ պրակտիկան պետք է հասկանալ որպես իրավահարաբերությունների սուբյեկտների օրինաստեղծ, իրավակիրառ գործունեության նյութապես փոխակերպող կողմ, որի ընթացքում կուտակվում է հանրային իրավական, սոցիալապես նշանակալի նորմատիվային և անհատական կարգավորման փորձ [Рожнов, 4] :

Այդ փորձի և իրավակարգավորումների փոխադարձ համագործակցության միջոցով վարչական մարմիններն իրականացնում են օրենքով իրենց վերապահված հայեցողական լիազորությունները:

Վարչական մարմինների հայեցողական լիազորությունների, դրանց կիրառման սահմանների կարգավորմանն է ուղղված օրենսդրի կողմից 2004 թվականի փետրվարի 18-ին ընդունված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը, որի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմինն վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ [«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք /31.02.2004/]:

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի 2015 թվականի նոյեմբերի 27-ին կայացրած նախադեպային որոշման համաձայն՝ «Հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «հայեցողություն» եզրույթի

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը [ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշում]:

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորմամբ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական մարմինն իրավասու է իր նախաձեռնությամբ հարուցել վարչական վարույթ միայն վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջի, դրանից բխող անհրաժեշտության կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորության առկայության դեպքում, քանի որ վարչական մարմինների հիմնական գործառնությանն են նպատակը Սահմանադրության և օրենքների իրականացումն է (կատարումը) իրավական պետության սկզբունքներին և կանոններին համապատասխան:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը նախատեսել է օրինականության ենթասկզբունք հանդիսացող օրենքի վերապահումը: Օրենքի վերապահում նշանակում է, որ վարչական մարմինը որևէ գործողություն իրականացնելու համար պետք է լիազորված լինի օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքում նաև այլ իրավական ակտով: Այսինքն, վարչական մարմինների հայեցողական լիազորությունները պետք է անխզելիորեն սահմանվեն օրենքով [ՀՀ Վճռաբեկ դատարանի 17.12.2021 թվականի որոշում]:

Իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ վարչական մարմինն օրենքով իրեն վերապահված լիազորությունը մեկնաբանում և կիրառում է իրեն հարմար տարբերակով՝ խախտելով անձի իրավունքներն ու օրինական շահերը, օրինակ՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով աշխատանքից ազատելու պայմաններից մեկն էլ (...) համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողի վերանշանակումն է մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր պաշտոնի կամ ավելի ցածր պաշտոնի՝ իր համաձայնությամբ [«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք /01.07.2018/]:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ինչպես երևում է նորմի բովանդակությունից, այն սահմանում է վարչական մարմնի գործողությունների հատուկ շրջանակ համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության դեպքում՝ կապված նույն մարմնի աշխատակիցների հետ: Մասնավորապես, քննարկվող նորմը սահմանում է համապատասխան մարմնի աշխատակիցների՝ աշխատանքային հետագա պայմանների մասով կարգավորում, որի շրջանակներում աշխատակիցները պետք է իրենց համաձայնությամբ.

1. նշանակվեն մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր պաշտոնի. կամ

2. ավելի ցածր պաշտոնի: (...)»:

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված վավերապայմանները բաժանված են «կամ» շաղկապով, որպիսի պայմաններում կիրառման է ենթակա այդ վավերապայմաններից որևէ մեկը: Այսինքն, քննարկվող նորմում խոսքը վերաբերում է համապատասխան մարմնի աշխատակիցների՝ աշխատանքային հետագա պայմանների մասով կարգավորմանը, որի շրջանակներում վերակազմակերպված կամ կառուցվածքային փոփոխության դեպքում այդ մարմնի աշխատակիցները պետք է կամ նշանակվեն հավասարազոր պաշտոնի, կամ ավելի ցածր պաշտոնի:

Վարչական մարմինը եկել է այն եզրահանգման, որ օրենքը համապատասխան մարմնի հայեցողությանն է վերապահում մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողին վերջինիս համաձայնությամբ զբաղեցրած պաշտոնին հավասարազոր պաշտոնի կամ ավելի ցածր պաշտոնի նշանակելու հարցը՝ անկախ հավասարազոր պաշտոնների առկայության կամ բացակայության փաստից:

Նման պայմաններում վարչական մարմնի վերակազմակերպման արդյունքում քաղաքացիական ծառայողին չի առաջարկվել մինչև վերակազմակերպումը նրա զբաղեցրած պաշտոնին հավասարազոր պաշտոն, այլ առաջարկվել է ավելի ցածր պաշտոն, որին վերջինս չի տվել իր համաձայնությունը: Այսինքն, քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատող իրավասու պաշտոնատար անձը հաշվի չի առել հանրային ծառայության հիմնական սկզբունքները՝ որևէ կերպ չհիմնավորելով հավասարազոր պաշտոնի չնշանակելու պատճառը, մինչդեռ հավասարազոր պաշտոնի կամ ավելի ցածր պաշտոնի նշանակելու հայեցողական լիազորությունն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է ընտրել մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը՝ ապացուցելով ընտրված լուծման իրավաչափությունը: Ավելին, քաղաքացիական ծառայողին ավելի ցածր պաշտոն առաջարկելու հայեցողական լիազորությունն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է հիմնավորել հավասարազոր պաշտոնի չնշանակելու պատճառը:

Նման օրինակները հայեցողական լիազորությունների կիրառման վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում բավականին շատ են և հատկապես վարչական մարմինն

տրված այն հայեցողական լիազորությունների մասով, որոնցում օրենսդիրը կիրառում է «կամ» շաղկապը՝ ստեղծելով իրավամեկնաբանման խնդիր, քանի որ վարչական մարմինն ինքն է դժվարություններ ունենում իրեն օրենքով վերապահված հայեցողական լիազորությունների մեկնաբանման և կիրառման հարցում:

Օրենսդիրն, ամրագրելով վարչական մարմնի համար հայեցողական լիազորություններ, երբեմն ձևակերպումների մասով խոչընդոտներ է ստեղծում վարչական մարմնի համար՝ հայեցողական լիազորությունների կիրառման հարցում, օրինակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածը, որի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում նախատեսված են վարչական վարույթի ընթացքում լուծման անցկացնելու ընդհանուր կանոնից որոշ բացառություններ:

Օրենքի վկայակոչված հոդվածի 2-րդ մասը սահմանում է լուծման չանցկացնելու այն հիմքերը, որոնց առկայության դեպքում վարչական մարմինն ունի հայեցողական լիազորություն ընտրելու լուծման անցկացնելու կամ չանցկացնելու երկու իրավաչափ լուծումներից մեկը: Մինչդեռ նույն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է լուծման չանցկացնելու իմպերատիվ հիմքերը:

Վարչական մարմինն ունի վարչական վարույթի ընթացքում լուծման չանցկացնելու հայեցողական լիազորություն նաև այն դեպքում, երբ «(...) վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուծման անցկացվեն (...)»: Լուծման չանցկացնելու նշված հիմքը սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով, այսինքն՝ այն նույն կետով, որով սահմանված է վարչական վարույթում լուծման չանցկացնելու վերը նկարագրված հիմքը, և այդ հիմքից առանձնացված է «կամ» շաղկապով, ինչն օրենսդրական տեխնիկայի ու իրավամեկնաբանման տեսանկյունից խնդրահարույց է: Օրենսդրական նման ձևակերպումների արդյունքում առաջանում է անհստակություն հետևյալ հարցի շուրջ. արդյոք լուծման կարող են չանցկացվել այն դեպքում, երբ վարչական վարույթի ընթացքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, և այդ բարենպաստ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուծման անցկացվեն, թե լուծման կարող են չանցկացվել այն դեպքում, երբ վարչական վարույթի ընթացքում ընդունվելու է միջամտող վարչական ակտ, և այդ միջամտող վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուծման անցկացվեն [Հակոբյան, 63-64]:

Կարծում ենք, որ չնայած ներկայացված օրինակի, այնուամենայնիվ օրենսդիրը չի կարող առանց հայեցողական լիազորությունների ձևակերպել օրենքի դրույթները՝ բացառելով գնահատողականությունը:

Մեր դիտարկմամբ, վարչական մարմնի գործունեությունը գնահատվում է «վարչական բարոյականության» տեսանկյունից. իր գործունեության ողջամտության սահմաններում: Եթե վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձն օգտագործում է իր լիազորությունները մասնավոր նպատակներով կամ հանրային շահերին հակասող այլ նպատակներով՝ չարաշահելով իրեն վերապահված

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

գործառույթներն, ապա դրա իրավական բացասական հետևանքների հետ մեկտեղ նման վարքագիծն արժանի է նաև բարոյական պարսավանքի:

Յուրաքանչյուր դեպքում հայեցողական լիազորությունների կիրառումը կախված է վարչական մարմնի կամայականությունից: Չնայած իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ օրենքի համապատասխան դրույթի ոչ ամբողջական ձևակերպման պատճառով վարչական մարմինը դրսևորում է կամայական մոտեցում, եթե անձը չի հիշատակում մեկ այլ վարչական գործով վարչական մարմնի կողմից կայացված որոշումը, օրինակ՝ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև 1992 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ կառավարության սահմանած այլ փաստաթուղթ:

1.1. 1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթը՝ աշխատանքային գրքույկն է կամ Կառավարության սահմանած այլ փաստաթուղթ և սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, բացառությամբ կառավարության սահմանած դեպքերի:

1.2. Սոցիալական վճարներ կատարելը և աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերի վավերապայմանները սահմանում է կառավարությունը [«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք /01.01.2011/]:

Դիտարկվող իրավիճակում օրենսդիրը սահմանել է, որ աշխատանքային ստաժը հավաստող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է, սակայն վարչական մարմնի կողմից տարանջատվում են այն դեպքերը, երբ քաղաքացու աշխատելու փաստը կրում է շարունակական բնույթ՝ առանց սոցիալական վճարներ կատարելու կամ աշխատավարձ ստանալու փաստը հավաստող փաստաթղթի, հետևաբար, վարչական մարմինը պետք է գերծ մնա օրենքի ձևական պահանջներից, առ այն, որ քաղաքացուն չպետք է զրկի իրեն հասանելիք կենսաթոշակից:

Եզրակացություն

Կարծում ենք, որ վարչական մարմնին վերապահված ցանկացած հայեցողություն պետք է լինի կառուցվածքային, այսինքն՝ կանոնակարգում և կազմակերպում՝ կարգուկանոնի ստեղծմամբ, ինչն իր հերթին նպաստում է վարչական մարմնի կողմից բարձրորակ վարչական ակտերի կայացմանը՝ խուսափելով մարդու իրավունքների և ազատությունների խախտումներից: Վարչական մարմինները, իրենց հայեցողական լիազորություններն իրականացնելիս, պետք է պահպանեն օրենսդրությունը և հետևեն իրավակիրառ պրակտիկայի զարգացումներին՝ նկատի ունենալով նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները: Նման պայմաններում վարչական մարմինները հեշտությամբ կարող են հասնել իրենց վերապահված հայեցողության նպատակին, այսինքն՝ իրականացնել պատշաճ վարչարարություն՝ ապահովելով

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

պետության կողմից իրենց վստահված հայեցողական լիազորությունների իրականացման բարդ խնդիրը՝ միաժամանակ ապահովելով վարչական մարմնի գործունեության նկատմամբ վստահության ձեռքբերումը կամ արդեն իսկ ձեռքբերված վստահությունը: Այսինքն, միայն արդարության, ողջամտության, օրինականության գործադրմամբ վարչական մարմինը կարող է իրականացնել արդյունավետ վարչարարություն: Վարչական մարմինները ոչ մի դեպքում չեն կարող փոխարինել իրենց տրված հայեցողությունը իրավունքի հաստատված սկզբունքներով, ինչն էլ վկայում է բարձրորակ վարչարարության օգտին միատեսակ մոտեցման ցուցաբերման մասին:

Վարչական մարմինն վերապահված հայեցողական լիազորության մեկնաբանումը իրավակարգավորումներին և իրավակիրառ պրակտիկային համահունչ թխում է ոչ միայն օրենքից, այլև վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձի գիտելիքներից, իրավագիտակցության մակարդակից, պրակտիկայում ձեռք բերված փորձից և հասարակությունում իր դերը հասկանալու կարողությունից:

Իրավակիրառ պրակտիկայում վարչական մարմինն օրենքով վերապահված հայեցողական լիազորությունների արդյունավետ կիրառումն ապահովող մեխանիզմների կատարելագործումը նպաստում է իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի փոխկապակցվածության ամրապնդմանը: Այդպիսի մեխանիզմներից առանձնացրել ենք հետևյալ երեքը՝

1. վարչական մարմինների պաշտոնյաների որակավորման բարձրացումը,
2. Միջազգային փորձի համադրումը՝ գործող իրավակարգավորումներին և իրավակիրառ պրակտիկային,

Վարչական մարմիններին օրենսդրությամբ տրված հայեցողական լիազորությունների պատշաճ իրականացման կարևորագույն երաշխիքներից մեկը վարչական մարմնում աշխատող պաշտոնատար անձանց մասնագիտական, ընդհանուր գիտելիքների և բարոյական հատկանիշների առկայությունն է, որի հիմքում կրթությունն է:

Հայեցակարգային մոտեցումն այն է, որ վարչական մարմիններն իրենց հայեցողական լիազորություններն իրականացնելիս սահմանափակված լինեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով, ինչի առանցքում վարչական մարմնի պաշտոնատար անձանց բարեխղճությունն է և իրավագիտակցության աստիճանը, հետևաբար, պետության կարևոր խնդիրներից մեկն էլ կրթության որակի բարելավումն է:

Վարչարարության արդյունավետ իրականացման և նպատակամղվածության ապահովման համար հաճախ անհրաժեշտ է հիմնվել միջազգայնորեն ընդունված օբյեկտիվ ցուցանիշների վրա, որոնք մոտ են ազգային օրենսդրությանը: Առավել արդյունավետ կլինի միջազգային փորձի փոխանակումն իրականացնել քննարկումների միջոցով, քանի որ այդ կերպ հնարավոր է բարձրացնել հայեցողական լիազորությունների իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի առջև

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ծագած խնդիրները՝ փորձելով միջազգային փորձի օգնությամբ գտնել դրանց լուծման հնարավոր տարբերակները:

Իրավակիրառ պրակտիկայի զարգացման հետ զուգընթաց, հաճախ առաջ է գալիս օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն, քանի որ ժամանակի ընթացքում հայեցողական լիազորությունները կորցնում են իրենց արդիականությունը: Սակայն, ցանկացած փոփոխության դեպքում, առկա են որոշ սահմանափակումներ, ինչպիսիք են՝ ողջամտությունը և համաչափությունը, անձանց օրինական ակնկալիքների պաշտպանությունը: Նման սահմանափակումները ևս ունեն իրենց իրավաչափ սահմանները, այն է՝ օրենքով որոշակիության ապահովում՝ իրավական համակարգի ու իրավակիրառ պրակտիկայի վարչարարության երաշխավորման ճանապարհով: Այսինքն, կարևոր է ապահովել «իրավական ակտ – հայեցողական լիազորություն» շղթայի ներդաշնակությունն, ինչպես նաև իշխանության թևերի գործառությանին, հակակշռող և զսպող լիազորությունների հաշվեկշռվածությունը, լիազորությանը համարժեք հանրային-իրավական պատասխանատվության անխուսափելիությունն, առանց որի կարող է առաջանալ սուբյեկտիվ հայեցողության կիրառման խնդիր:

Իրավակիրառ պրակտիկայի և իրավակարգավորումների հետևողական և համակարգված փոխկապվածությունը հնարավորություն է տալիս հասկանալ, թե օրենսդրությամբ սահմանված հայեցողական լիազորությունները որքանո՞վ են կատարյալ կամ անկատար, որո՞նք են դրանց առավելություններն ու թերություններն, ինչի հիման վրա էլ կատարվում են հայեցողական լիազորությունների վերաբերյալ անհրաժեշտ եզրակացություններ և ապագայի կանխատեսումներ: Կարծում ենք, որ իրավակիրառ պրակտիկայի հիման վրա հայեցողական լիազորությունների կիրառման մասով կարող է իրականացվել՝

- I. օրենսդրական ուղղորդում, երբ պրակտիկան է սահմանում հայեցողական լիազորությունների ձևավորման և զարգացման ընդհանուր ուղղությունը,
- II. հայեցողական լիազորություններին վերաբերելի նորմերի մեկնաբանում կոնկրետ իրավիճակներում,

Իրավակիրառ պրակտիկան համարվում է հասարակության իրավական համակարգի էական բաղադրիչ, առանց որի դժվար է պատկերացնել իրավական համակարգի ձևավորումը և զարգացումը: Այն ուղղորդում է օրենսդիր մարմնին հայեցողական լիազորություններին վերաբերելի օրենսդրական կարգավորումների ստեղծմանը՝ կառուցելով դրանց զարգացման ուղիները:

Իրավակիրառ պրակտիկայի աջակցությամբ օրենսդիրը, սահմանելով հայեցողական լիազորություններ, վարչական մարմնին ընձեռում է հնարավորություն կոնկրետ իրավիճակում մեկնաբանել տրված հայեցողությունը՝ չխախտելով մարդու իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև վարչարարության սկզբունքները:

Հայեցողական լիազորություններին վերաբերելի նորմերի փոփոխման և դրանց կատարելագործման հարցում էական դերակատարում ունի իրավակիրառ պրակտիկան,

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

քանի որ դրա միջոցով են բացահայտվում այն խնդիրները, որոնք ծառանում են վարչական մարմնի առջև: Նշված մեխանիզմները յուրահատուկ ուղեցույց են օրենսդրի համար, քանի որ դրանք ուղղված են վարչական իրավունքում հայեցողական լիազորությունների հետ կապված խնդիրների բացահայտմանը և դրանց համարժեք լուծմանը:

Իրավունքի իմաստաբանական հարթությունում անհրաժեշտ է դիտարկել վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների կիրառման արդյունավետ մեխանիզմները, որոնք բխում են պրակտիկայում ձեռքբերված գիտելիքների ուժից և գործի հանգամանքների իրավական գնահատումից, հակասությունների հաղթահարումից, հայեցողական լիազորությունների մեկնաբանումից և հստակեցումից: Այս երևույթներն օրենսդրության մեջ հնարավորինս փորձ է կատարվել լուծել, այդ թվում՝ հայեցողական լիազորությունների սահմանման միջոցով, սակայն դեռևս առկա են խոչընդոտներ դրանց միատեսակ կիրառման հարցում, ինչը բխում է նաև վարչական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործունեության բարեխղճությունից և պրակտիկայում ձեռք բերված փորձից:

Իրավակիրառ պրակտիկան սերտորեն փոխկապակցված է իրավական կարգավորման նորմատիվ համակարգին, որն էլ հիմք է վարչական մարմնի համար հասնել իրեն վերապահված հայեցողական լիազորության իրականացմանը՝ ապահովելով մարդու ազատության իրավունքը և օրինական շահերը, պետական և հասարակական շահերը:

Գրականության ցանկ

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք /31.02.2004/:
2. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք /01.07.2018/:
3. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք /01.01.2011/:
4. ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշում:
5. ՀՀ Վճռաբեկ դատարանի 17.12.2021 թվականի որոշում:
6. Հակոբյան Կ., Լսված լինելու իրավունքը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր, Երևանի պետական համալսարան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու 1(1), 2018, Երևան, էջ 54-71:
7. Рожнов А., Правоприменительная практика как нетрадиционный источник российского права. тема диссертации и автореферата по ВАК РФ 12.00.01. 2003. 252с.

LEGAL REGULATIONS OF EXECUTIVE AUTHORITIES IN NATIONAL
LEGISLATION AND LEGAL PRACTICE

Armine Hovsepyan

Researcher

EUA, Chair of Law

aarminehovsepyan@gmail.com

Abstract

This article emphasizes that any discretion reserved for an administrative body must be structural-that is, regulatory and organized, with the creation of order - which in turn contributes to the adoption of high-quality administrative acts by the administrative body, avoiding violations of human rights and freedoms. When exercising their discretionary powers, administrative bodies must comply with legislation and remain aligned with developments in legal practice, including taking into account precedent decisions of the Court of Cassation. Under such conditions, administrative bodies can effectively achieve the purpose of their discretion: to implement proper administration, fulfilling the challenging task of exercising state-delegated discretionary powers while simultaneously maintaining or gaining public trust in their activities.

Furthermore, the article addresses the close interdependence of law enforcement practice and the normative system of legal regulation in the exercise of discretionary powers, based on the effective mechanisms for the exercise of discretionary powers by the administrative body, which stem from the strength of knowledge acquired in practice and the legal assessment of the circumstances of the case, overcoming contradictions, problems arising from controversial aspects of the interpretation and clarification of discretionary powers, highlighting possible solutions to be applied by the administrative body. According to analysis, mechanisms for strengthening the interdependence of law enforcement practice and legal regulations will contribute to the improvement of administration.

Keywords: Legal practice, discretionary power, administrative law, legal regulation, international experience, effective mechanism.

Ներկայացվել է՝ 04.03.2025թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 29.04.2025թ.